է միայն երկրագործութեան։ Ասածներիս թող ապացոյց լինի այն, որ Բաղու-Թիֆլիզեան երկաթուղու գիծը բացուելուն պէս Ղարաբաղի, Շամախու, Թիֆլիզի, Գանձակի, Երևանի և ուրիշ տեղերի գիւղացիք վազեցին Բաղու, շուտով հարստանալու և միլիոնների տէր դառնալու պատրանքով։ Կարճ խօսքով՝ Կովկասի զանազան անկիւններից հազարաւոր ու բիւրաւոր Հայ ընտանիքներ թողնելով իրենց հայրենի աշխարհը, իրենց պապական ազնիւ պարապմունքները, հետըզհետէ գաղթեցին Անդրկասպեան երկրներից սկսած, մինչև լայնածաւալ Ռուսիայի ամենահեռաւոր ծայրերը։ Այն ինչ Ուտիացիները՝ Բաղուին շատ մօտիկ լինելով հանդերձ նրանցից ոչ ոք չշարժուեց իւր տեղից և ոչ ոք դէս ու դէն ընկած չթափառեց և երբէք էլ չի թափառի, քանի որ Ուտիացիների սիրտն ու հոգին ամուր կապուած է իւր աշխարհի օդի ու ջրի, նրա պտղաբեր հողի և նուիրական սրբավայրերի հետ, քանի որ նրա ուշքն ու միտքը, լարուած ու կենդրոնացած է յատկապէս միմիայն երկրագործութեան վրայ, որից դուրս նա իւր գոյութիւնը վտանգուած է համարում։

Փորձի համար Ուտիացի Հային պատմեցէք աշխարհիս զանազան մասերի մի քանի գեղեցիկ վայրերի և սքանչելի տեղերի գոյութեան մասին. նա երբէք չի հաւատայ ձեր ասած խօսքերին, վասնզի նրա կարծիքով ու համոզմունքով Ուտիացոց աշխարհից լաւ երկիր ուրիշ ոչ մի տեղ չի լինիլ ամբողջ աշխարհիս վրայ։ Փորձելու հա-